<<ԵԳՊԱ>> ՊՈԱԿ-ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ <<ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ>> ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N <<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/11/-17/02>> -2

ք. Երևան <<27>> <<փետրվարի>> 2017թ.

<<Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա>> ՊՈԱԿ-ն, ի դեմս ռեկտոր Արամ Իսաբեկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<ԼԱՆԿԱ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված <<Տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցներ>> /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 437340 (չորս հարյուր երեսունյոթ հազար երեք հարյուր քառասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված

հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծ: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել

Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» ՊՈԱԿ ք. Երևան, Իսահակյան 36 «Անելիք բանկ» Տիգրան Մեծ մ/ճ Հ/Հ 11815000774800 ՀՎՀՀ 01505555 Ռեկտոր Ա. Իսաբեկյան (ստորագրություն) Կ.Տ.	<<ԼԱՆԿԱ>> ՍՊԸ ք. Երևան, Վարդանանց 22 «Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկ» cՓԲԸ Հ/Հ 220553330527000 ՀՎՀՀ 01538895 Տնօրեն Կ. Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 2
<<27>> <<փետրվարի>> 2017թ. կնքված
<<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/11/-17/02>> -2 *ծածկագրով գնման պայմանագրի*

<<ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ>> ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<< դրամ

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2017թ.								Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
6	դռան փականի միջուկ	հատ	840	20	16800							20	16800
10	մեկուսիչ ժապավեններ	հատ	196	15	2940							15	2940
11	լամպերի կոթառներ	հատ	96	10	960							10	960
17	ավտոմատ անջատիչ 63Ա	հատ	1640	20	32800							20	32800
19	լամպ	հատ	4200	60	252000							60	252000
20	մեխ	կգ	640	4	2560							4	2560
50	սոսինձ, էմուլսիա	հատ	840	10	8400							10	8400
53	զուգարանի պապլավոկ	հատ	960	20	19200							20	19200
55	լամպերի ստարտերներ	հատ	100	20	2000							20	2000
57	քլունգներ	հատ	3600	2	7200							2	7200
59	աքցաններ	հատ	1200	4	4800							4	4800
60	փական 1/2 ռուսական լատուն	հատ	1500	6	9000							6	9000
61	փական 3/4 ռուսական լատուն	հատ	1800	6	10800							6	10800
62	փական 1 դույմ լատուն	հատ	2800	6	16800							6	16800
65	հարթաշուրթ	հատ	1350	2	2700							2	2700
66	պտուտակահան տարբեր չափերի	հատ	500	6	3000							6	3000
67	մետր	հատ	1560	2	3120							2	3120
68	մետր	հատ	1800	2	3600							2	3600
69	մուրճեր	հատ	1500	6	9000							6	9000
71	պտուտակ 20մմ	հատ	3	100	300							100	300
72	պտուտակ 30մմ	հատ	3	100	300							100	300
73	պտուտակ 40մմ	հատ	4	100	400							100	400

74	պտուտակ 50մմ	հատ	5	100	500							100	500
75	պտուտակ 60մմ	հատ	8	100	800							100	800
76	սաղափ /սվերլո/ 3մմ	հատ	100	6	600							6	600
77	սաղափ /սվերլո/ 4մմ	հատ	120	6	720							6	720
78	սաղափ /սվերլո/ 5մմ	հատ	150	6	900							6	900
79	սաղափ /սվերլո/ 6մմ	հատ	180	6	1080							6	1080
80	սաղափ /սվերլո/ 7մմ	հատ	200	6	1200							6	1200
81	սաղափ /սվերլո/ 8 մմ	հատ	240	6	1440							6	1440
82	սաղափ /սվերլո/ 3մմ - պաբեղիտ, կարծրատիպ	հատ	150	6	900							6	900
83	սաղափ /սվերլո/ 4մմ	հատ	180	6	1080							6	1080
84	սաղափ /սվերլո/ 5մմ	հատ	240	6	1440							6	1440
85	սաղափ /սվերլո/ 6մմ	հատ	350	6	2100							6	2100
86	սաղափ /սվերլո/ 7մմ	հատ	350	6	2100							6	2100
87	սաղափ /սվերլո/ 8 մմ	հատ	400	6	2400							6	2400
88	կտրող քար 11,5 սմ	հատ	540	10	5400							10	5400
89	կտրող քար 23սմ	հատ	1000	6	6000							6	6000
Ընդամենը				X		X		X		X		X	437340

ԳՆՈՐԴ

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
<<27>> <<փետրվարի>> 2017թ. կնքված
N <<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/11/-17/02>> -2 *ծածկագրով գնման պայմանագրի*

<<ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ>> ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	<<Տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցներ>>				437340									437340

ԳՆՈՐԴ

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 1
«27» «փետրվար» 2017 թ. կնքված
N <<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/11/-17/02>>-2 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ
«Լանկա» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 22
«Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկ» cՓԲԸ
Հ/Հ 220553330527000
ՀՎՀՀ 01538895

Պատվիրատու
«Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» ՊՈԱԿ
ք. Երևան, Իսահակյան 36
«Անելիք բանկ» Տիգրան Մեծ մ/ճ
Հ/Հ 11815000774800
ՀՎՀՀ 01505555

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« 15 » « մարտ » 2017 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ *« 27 » « փետրվար » 2017 թ.*

Պայմանագրի համարը՝ N *<<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/11/-17/02>>-2*

Պատվիրատուն՝ <<Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա>> ՊՈԱԿ-ն, ի դեմս ռեկտոր Արամ Իսաբեկյանի, և Պայմանագրի կողմը՝ ի դեմս «ԼԱՆԿԱ» ՍՊԸ տնօրեն՝ Կ.Մկրտչյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2017 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N01 եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմելիս սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմ.հաստատված գն. ժամ.	փաստացի	ըստ պայմ. հաստատված գն. ժամ.	փաստացի		
6	դռան փականի միջուկ	դռան փականի միջուկ ոչ ստանդարտ		20 հատ		16.80		
10	մեկուսիչ ժապավեններ	մեկուսիչ ժապավեն, ՖՈՒՄ, դեղին գույնի		15 հատ		2.94		
11	լամպերի կոթառներ	Կոթառ կերամիկական E27		10 հատ		0.96		
17	ավտոմատ անջատիչ 63Ա	63A, միաֆազ, պղնձե միձուկով, Legrand կամ համարժեքը		20 հատ		32.80		
19	լամպ	լուսատու ԼԵԴ , առաստաղի կպչովի, 24 Վտ, տրամագիծը 30սմ		60 հատ		252.00		
20	մեխ	մեխ շինարարական 60մմ-ից 120մմ չափսեր, GOUS4028-63		4 կգ		2.56		
50	սոսինձ, էմուլսիա	1կգ		10 հատ		8.40		
53	զուգարանի պապլավոկ	զուգարանի պապլավոկ		20 հատ		19.20		
55	լամպերի ստարտերներ	լամպերի ստարտերներ		20 հատ		2.00		
57	քլունգներ	քլունգներ		2 հատ		7.20		
59	աքցաններ	աքցաններ		4 հատ		4.80		

60	փական 1/2 ռուսական լատուն	փական 1/2 ռուսական լատուն		6 հատ		9.00		
61	փական 3/4 ռուսական լատուն	փական 3/4 ռուսական լատուն		6 հատ		10.80		
62	փական 1 դույմ լատուն	փական 1 դույմ լատուն		6 հատ		16.80		
65	հարթաշուրթ	հարթաշուրթ		2 հատ		2.70		
66	պտուտակահան տարբեր չափերի	պտուտակահան տարբեր չափերի		6 հատ		3.00		
67	մետր	մետր 7,5 մ,		2 հատ		3.12		
68	մետր	մետր 10 մ		2 հատ		3.60		
69	մուրճեր	մուրճեր		6 հատ		9.00		
71	պտուտակ 20մմ	պտուտակ 20մմ		100 հատ		0.30		
72	պտուտակ 30մմ	պտուտակ 30մմ		100 հատ		0.30		
73	պտուտակ 40մմ	պտուտակ 40մմ		100 հատ		0.40		
74	պտուտակ 50մմ	պտուտակ 50մմ		100 հատ		0.50		
75	պտուտակ 60մմ	պտուտակ 60մմ		100 հատ		0.80		
76	սաղափ /սվերլո/ 3մմ	սաղափ /սվերլո/ 3մմ		6 հատ		0.60		
77	սաղափ /սվերլո/ 4մմ	սաղափ /սվերլո/ 4մմ		6 հատ		0.72		
78	սաղափ /սվերլո/ 5մմ	սաղափ /սվերլո/ 5մմ		6 հատ		0.90		
79	սաղափ /սվերլո/ 6մմ	սաղափ /սվերլո/ 6մմ		6 հատ		1.08		
80	սաղափ /սվերլո/ 7մմ	սաղափ /սվերլո/ 7մմ		6 հատ		1.20		
81	սաղափ /սվերլո/ 8 մմ	սաղափ /սվերլո/ 8 մմ		6 հատ		1.44		
82	սաղափ /սվերլո/ 3մմ -պաբեղիտ, կարծրատիպ	սաղափ /սվերլո/ 3մմ -պաբեղիտ, կարծրատիպ		6 հատ		0.90		
83	սաղափ /սվերլո/ 4մմ	սաղափ /սվերլո/ 4մմ		6 հատ		1.08		
84	սաղափ /սվերլո/ 5մմ	սաղափ /սվերլո/ 5մմ		6 հատ		1.44		
85	սաղափ /սվերլո/ 6մմ	սաղափ /սվերլո/ 6մմ		6 հատ		2.10		
86	սաղափ /սվերլո/ 7մմ	սաղափ /սվերլո/ 7մմ		6 հատ		2.10		
87	սաղափ /սվերլո/ 8 մմ	սաղափ /սվերլո/ 8 մմ		6 հատ		2.40		
88	կտրող քար 11,5 սմ	կտրող քար 11,5 սմ		10 հատ		5.40		
89	կտրող քար 23սմ	կտրող քար 23սմ		6 հատ		6.00		
		ԸՆԴԱՄԵՆԸ				437.34		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

Փոխտնօրեն Բ.Կիրակոսյան

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 1.1
« 27 » « փետրվար » 2017 թ. կնքված
N <<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/11/-17/02>>-2 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N 01

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ <<Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա>> ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և <<ԼԱՆԿԱ>>ՍՊԸ-ն (այսուհետ՝ Վաճառող) միջև «27» «փետրվար» 2017թ. կնքված N<<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/11/-17/02>>-2 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը «15» «մարտ» 2017թ. հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը
դռան փականի միջուկ	20	հատ
մեկուսիչ ժապավեններ	15	հատ
լամպերի կոթառներ	10	հատ
ավտոմատ անջատիչ 63Ա	20	հատ
լամպ	60	հատ
մեխ	4	կգ
սոսինձ, էմուլսիա	10	հատ
զուգարանի պնապլավոկ	20	հատ
լամպերի ստարտերներ	20	հատ
քլունգներ	2	հատ
աքցաններ	4	հատ
փական 1/2 ռուսական լատուն	6	հատ
փական 3/4 ռուսական լատուն	6	հատ
փական 1 դույմ լատուն	6	հատ
հարթաշուրթ	2	հատ
պտուտակահան տարբեր չափերի	6	հատ
մետր	2	հատ
մետր	2	հատ
մուրճեր	6	հատ
պտուտակ 20մմ	100	հատ
պտուտակ 30մմ	100	հատ
պտուտակ 40մմ	100	հատ
պտուտակ 50մմ	100	հատ
պտուտակ 60մմ	100	հատ
սաղափ /սվերլո/ 3մմ	6	հատ
սաղափ /սվերլո/ 4մմ	6	հատ
սաղափ /սվերլո/ 5մմ	6	հատ
սաղափ /սվերլո/ 6մմ	6	հատ
սաղափ /սվերլո/ 7մմ	6	հատ
սաղափ /սվերլո/ 8 մմ	6	հատ
սաղափ /սվերլո/ 3մմ -պաբեդիտ, կարծրատիպ	6	հատ
սաղափ /սվերլո/ 4մմ	6	հատ
սաղափ /սվերլո/ 5մմ	6	հատ
սաղափ /սվերլո/ 6մմ	6	հատ

սաղափ /սվերլո/ 7մմ	6	հատ
սաղափ /սվերլո/ 8 մմ	6	հատ
կտրող քար 11,5 սմ	10	հատ
կտրող քար 23սմ	6	հատ

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Ը.Կիրակոսյան
ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

Ապրանքների մատակարարման հարկային հաշիվ

Ա4810755314

[1] Դուրս գրման ամսաթիվ		
15	Մարտ	2017 թ.
[4] Մատակարարման ամսաթիվ		
15	Մարտ	2017 թ.

Հարկային հաշիվ
(ապրանքների մատակարարման)

Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X»)	հատուկ

[2] Սերիա	[3] Համար
Ա	4810755314

Ճշգրտվող հաշվի	
Սերիա	Համար

Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ		

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար		
	27 Փետրվար, 2017 թ.	<<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/11/-17/02>>-2	[7]	
			[8]	
			[9]	

[10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)
Վճարումը փոխանցումով

Ապրանքներ մատակարարող (առաքող) անձի

[11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 1 5 3 8 8 9 5
[12] Անվանումը	«ԼԱՆԿԱ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)
[13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 1 5 3 8 8 9 5 / 1
[14] Բանկային տվյալները	ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ N 22055-3330527000
[15] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ Փ. 22
[16] Վայրը, որտեղից ապրանքները մատակարարվում են	ք.Երևան, Վարդանանց 22, շինություն 173
[17] Լրացուցիչ տվյալներ	225

Ապրանքներ ձեռք բերող անձի

[18] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (Ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 1 5 0 5 5 5 5
[19] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ)
[20] Բանկային տվյալները	Անելիք բանկկենտրոն մ/ճ N 11805107033200
[21] Գտնվելու վայրը (հասցեն)	ԿԵՆՏՐՈՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ Փ. 36
[22] Լրացուցիչ տվյալներ	
[23] Ում միջոցով	Անուն, ազգանուն: Լիազորագիր: Համար: Ամսաթիվ:
[24] Ապրանքների մատակարարման (առաքման) եղանակը	առաքում
[25] Մատակարարվող (առաքվող) ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ք.Երևան, Իսահակյան 36

[26] Մատակարարվող ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ապրանքի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումարը	Ընդամենը	Այդ թվում՝ բնապ. վճար
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	դռան փականի միջուկ	հատ	20	700	14000	20	2800	16800	
2	մեկուսիչ ժապավեններ	հատ	15	163.33	2450	20	490	2940	
3	լամպերի կոթառներ	հատ	10	80	800	20	160	960	
4	ավտոմատ անջատիչ 63Ա	հատ	20	1366.67	27333.33	20	5466.67	32800	
5	լամպ	հատ	60	3500	210000	20	42000	252000	
6	մեխ	կգ	4	533.33	2133.33	20	426.67	2560	
7	սոսինձ, էմուլսիա 1կգ	հատ	10	700	7000	20	1400	8400	
8	զուգարանի պապլավոկ	հատ	20	800	16000	20	3200	19200	
9	լամպերի ստարտերներ	հատ	20	83.33	1666.67	20	333.33	2000	
10	թյունգներ	հատ	2	3000	6000	20	1200	7200	
11	աքցաններ	հատ	4	1000	4000	20	800	4800	
12	փական 1/2 ռուսական յատուն	հատ	6	1250	7500	20	1500	9000	
13	փական 3/4 ռուսական յատուն	հատ	6	1500	9000	20	1800	10800	

Ապրանքների մատակարարման հարկային հաշիվ

U4810755314

14	փական 1 դռվմ լատուն	հատ	6	2333.33	14000	20	2800	16800	
15	հարթաշուրթ	հատ	2	1125	2250	20	450	2700	
16	պտուտակահան տարբեր չափերի	հատ	6	416.67	2500	20	500	3000	
17	մետր	հատ	2	1300	2600	20	520	3120	
18	մետր	հատ	2	1500	3000	20	600	3600	
19	մուրճեր	հատ	6	1250	7500	20	1500	9000	
20	պտուտակ 20մմ	հատ	100	2.5	250	20	50	300	
21	պտուտակ 30մմ	հատ	100	2.5	250	20	50	300	
22	պտուտակ 40մմ	հատ	100	3.33	333.33	20	66.67	400	
23	պտուտակ 50մմ	հատ	100	4.17	416.67	20	83.33	500	
24	պտուտակ 60մմ	հատ	100	6.67	666.67	20	133.33	800	
25	սաղափ /սվերլո/ 3մմ	հատ	6	83.33	500	20	100	600	
26	սաղափ /սվերլո/ 4մմ	հատ	6	100	600	20	120	720	
27	սաղափ /սվերլո/ 5մմ	հատ	6	125	750	20	150	900	
28	սաղափ /սվերլո/ 6մմ	հատ	6	150	900	20	180	1080	
29	սաղափ /սվերլո/ 7մմ	հատ	6	166.67	1000	20	200	1200	
30	սաղափ /սվերլո/ 8 մմ	հատ	6	200	1200	20	240	1440	
31	սաղափ /սվերլո/ 3մմ -պաբեդիտ, կարծրատիպ	հատ	6	125	750	20	150	900	
32	սաղափ /սվերլո/ 4մմ	հատ	6	150	900	20	180	1080	
33	սաղափ /սվերլո/ 5մմ	հատ	6	200	1200	20	240	1440	
34	սաղափ /սվերլո/ 6մմ	հատ	6	291.67	1750	20	350	2100	
35	սաղափ /սվերլո/ 7մմ	հատ	6	291.67	1750	20	350	2100	
36	սաղափ /սվերլո/ 8 մմ	հատ	6	333.33	2000	20	400	2400	
37	կտրող քար 11,5 սմ	հատ	10	450	4500	20	900	5400	
38	կտրող քար 23սմ	հատ	6	833.33	5000	20	1000	6000	
Ընդամենը					364450	X	72890	437340	

Դուրս գրող՝ MKRTCHYAN KAREN 3904640240

անունը, ազգանունը

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

15/03/2017 14:32:34